

ԻՆՉՊՆՍ ԵՐ

ՀԱՆԳԱՅԱՆՈՒՄ

ԼԵՆԻՆԸ

ԻՆՉՊԵՍ ԵՐ  
ՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ

# Լ Ե Ն Ի Ն Ը

ԺՈՂՈՎԱԾՈՒ



Ֆոտո-նկարներ  
ու շապիկը  
Վ. ՅԵԼԿԻՆԻ




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ — 1934

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- 1. Անվախ ընկեր—Պ. Լեպեշինսկի\*) 3
- 2. Կառնավալ—Վ. Բոնչ-Բրուշվիչ 5
- 3. Շախմատի սեղանի առաջ—Լեպեշինսկի . . . . . 10
- 4. Գորոզիկի—Տ. Սապրոնով . . . . . 16
- 5. Վլ. Իլիչի հոնգիստը—Վ. Բոնչ-Բրուշվիչ . . . . . 20
- 6. Վորսի—Ն. Կոխլենկո . . . . . 27

\*) Հատվածներ հիշյալ հեղինակների տարբեր գրվածքներով




11-248639/1

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան, լեզվ. խմբագիր՝ Ս. Ասատյան, քարգմանիչ՝ Մ. Դուրգարյան, տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան, սրբագրիչ՝ Հ. Ստոիկյան:  
 Գլավ. թիվ № 3450(բ). Պատվեր № 317. Հրատարակչ. № 2581. Տիրաժ 3000: Պետհրատի ապարան, Յերևան:



ԱՆ-ՎԱՄ, ԸՆ-ԿԵՐ, ՔԱՅ-ԼԵՆԿ



ՁԱՐԿ-ՁԱՐԿ

**Մ**ինուսինսկում մեր տոնական հավաքի օրերն (1899 թվի հունվարի 1-ի մոտերքը, աքսորավայրում) անցան մի ակնթարթի պես: Շախմատ, ուրախ ասուլիս, դիսկուսիաներ, զբոսանքներ և ապա կրկին շախմատ, իսկ բազմազանության համար նաև խմբերգ:

Յերգը մեր ծրագրում վերջին տեղը չէր բռնում: Յեվ այդ յերգերի մեջ Վլադիմիր Իլյիչն առանձին թափ ու կենդանութիւն էր մտցնում: Յերբ բանը հասնում էր մեր սովորական ռեպերտուարը կատարելուն, նա վոգւերում ու սկսում էր ղեկավարել:

— Թող կորչի՛ այդ «Такую ее долю»-ն (ուկրաինական մեյրամաղձոտ յերգ՝ կրօնական տրամադրութեամբ): Յեկեք մեր «Անվախ, ընկեր»-ը զլենք:

Յեվ անմիջապես, իր առաջարկած յերգի հերթականութեան նկատմամբ լինելիք «պառլամենտական ձգձգումներից» խուսափելու համար՝ չնայած այդ յերգն արդեն բավականին ձանձրացրել էր մյուսներին, Վլադիմիր Իլյիչն շտապում էր սկսել յերգն՝ իր խուպոս, փոքր ինչ Փալչ ձայնով, վոր բարխտոնի, բասի ու տե՛նորի միջինի նման էր:

Անվա՛խ, ընկե՛ր, քայլե՛նք շարք-շարք,  
կովում հոգով ամրանանք...

Հենց վոր նրան թվում էր, թե խումբը բավարար չափով չի հեշտութեամբ կատարում յերգի շեշտված տեղերը, նա բոցավառ աչքերով ու յեռանդուն կերպով սկսում էր տակտով շարժել բունցըներն՝ անհամբերութեամբ դուրս գալով և, ի վնաս հարմոնիայի տարրական կանոնների, ընդգծել իրեն դուր յեկող տեղերը՝ իր ձայնական միջոցների լարումով, շատ հաճախ վորեւէ պատասխանատու նոտա կես կամ մեկ սոտիճան բարձրացնելով...

Սև որերն արդեն անցան—

Մոտ է ժամը հատուցման...

Թնդում էր նրա «մի տեսակ բարխտոնը», խլացնելով մյուսների ձայները...

## ԿԱՌՆԱՎԱԼ


Ս, մեն տարի, դեկտեմբերին ժընևում լայն ժողովըրդական տոն է լինում: Ժընևցիք այդ որին տոնում են իրենց վաղուցվա ազատագրումն ոտարեկրյա շճից: Պահպանվել է մի ավանդութիւն, թե՛ յերբ ոտարեկրյա դորքերը պաշարել էյին ապստամբած ժընևցիներին և ցանկանում էյին նորից հպատակեցնել իրենց, այն ժամանակ բոլոր ժընևցիք վոտքի յելան իբրև մի մարդ: Յեվ մինչդեռ կովում էյին աղամարդիկ, կանայք ու յերեխաները բերդի պատերից յեռացրած ջուր էյին ածում պաշարող զինվորների գլխին, վորոնք յելարաններով բարձրանում էյին բերդի պատերի վրա:

Յեվ ժընևցիք հաղթեցին ու քչեցին թչնամուն:

Սյն ժամանակվանից սկսած ժընևցիք սերնդե-սերունդ տոնում են իրենց ազատագրումն ատելի լճից:

Քաղաքը կենդանանում է: Գալիս է ժողովրդական կրկեսը, գազանանոցներ են բերում, կազմակերպում են հրաձգարան և այլ գվարձալիքներ, բայց ամենահետաքրքրականը յերեկոյան կառնավալն է: Բոլորը փողոց են դուրս գալիս զգեստավորված և դիմակներով: Իրար հեղեղում են կռնփետտիներով, փաթաթում սերպանտիլնով: փողոցները փայլում են շքեղ լույսերով, հրթիռներով, յերգ ու խնդութեամբ:

Մենք, ուսս վտարանդիներս, իհարկէ, գնում էյինք այս տեսարանը դիտելու, սակայն, մեր մոայլութեան, անչնորհութեան ու ամաչկոտութեան չնորհիվ՝ կենդանի մասնակցութիւն չէյինք ցույց տալիս այդ ժողովրդական ուրախ տոնին, վոր տեում էր ամբողջ չորս օր: Յեվ յերբ մեզ մոտ՝ կուսակցութեան մեջ ամբողջ ուժով յեռում էյին կրքերը, յերբ բուլչեիկների ու մենչեիկների



պառակտումը բաժանեց բոլորին և յերբ չքացավ մեր ուրախ տրամադրութիւնը, վրա հասավ գեկտեմբերը... Մենք մեր անկյուններում նստած՝ ուսումնասիրում եյինք փաստաթղթերը, պատրաստում եյինք զեկուցումներ, կառուցում եյինք մեր նոր կազմակերպութիւնը: Ի՞նչ ժամանակ եր ուրախանայու: Նույնիսկ չեյինք ուզում տնից դուրս գալ: Հանկարծ գանգի ձայն ենք լսում: Մտնում ե վրադիմիր Իլլիչն, ուրախ ու աշխույժ:

— Ես ի՞նչ ե, պոկ չենք գալիս զբքերից, անվերջ



մոտայութիւնն ու լրջութիւնն: Մի տեսեք՝ ինչ ուրախութիւնն ե տիրում փողոցներում: Ծիծաղ, կատակ,

պարե'ր: Գնա'նք զբոսանքի: Քուր կարևոր հարցերը հետաձգենք վաղվան:

Մենք շարժվեցինք: Այնպե՛ս հաճելի յեր տեսնել Վլադիմիր Իլյիչին առույգ և ուրախ տրամադրությամբ: Վերջին ժամանակներս, համազումարից հետո, նա այնքան եր հոգնել ու ջղայնացել, վոր թվում եր, թե դժվար ե սպասել նրա մեջ նոր կենդանի ստեղծագործական ուժերի կուտակում:

Կարծես բոլորն սպասում եյին այդ կանչին, վորը ցրելու յեր մեր մռայլ տրամադրությունը: Մենք խոնված ու աղմուկով դուրս յեկանք փողոց: Գեղեցիկ ու տաք յեղանակ եր: Ամենուրեք պսպղում եյին լույսերը և մոտիկից հոսող ջրառատ ու սրընթաց լեռնային գետը՝ Արվան այնպե՛ս հաճելի յեր իր յեկեջներով:

Անցանք ընկերների մոտ և բոլորին ել քաշ ավինք մեզ հետ: Անվերջ աղմկում եյինք ու քրքջում, և ամենից ավելի Վլ. Իլյիչն եր ուրախանում: Ուրախ խմբով մենք խառնվեցինք փողոցի ընդհանուր խնդությանը, յերգում եյինք, բղավում, աղմկում, հետզհետե ավելի վարակվելով ընդհանուր բարձր տրամադրությամբ: Մեր սերպանտինի ժապավեններն ավելի յեռանդով եյին թռչում դեպի բոլոր կողմերը, քան մյուս խմբերինը, և մենք ջանասիրությամբ եյինք կոնֆետտի թափում ավելի հետաքրքրական ու աշխույժ դիմակների վրա:

Հնչեց յերգը: Յերգում եյին բոլորը, ամբողջ փողոցը յերգում եր ուրախ, առույգ յերգեր, վորոնց մեջ մերթ հնչում եյին մարսելյեզի, մերթ կարմանյոլայի\*) յեղանակներ: Մեկ-մեկ սկսեցին պարել: Հանկարծ Վլ. Իլյիչն արագությամբ ու յեռանդուն կերպով բռնեց մեր ձեռքերը և վայրկենապես շրջան կազմեց մի քանի դիմակավորված աղջիկների շուրջը, և մենք յերգեցինք,

\*) Կարմանյոլա—Ֆրանսիական հեղափոխական լերգ՝ պարի ուղեկցությամբ:

պարեցինք ու պտտվեցինք նրանց չորս կողմը: Նրանք մեզ ընդունեցին յերգերով ու իրենք ել սկսեցին պարել: Մեր շրջանը մեծացավ, և մենք ընդհանուր ցնծության մեջ, չլթալով շարժվելով փողոցով, շրջապատելով յերբեմն մեկին, յերբեմն՝ մյուսին, գրավում եյինք նրանց ու տանում մեզ հետ: Մեր որինակին հետևեցին ուրիշները, մանավանդ յերիտասարդությունը, վորը մեծ հաճույքով արձագանքում եր մեր ամեն մի նոր յերգին ու կատակին:

Պետք եր տեսնել, թե ի՛նչպիսի անկեղծ ուրախությամբ, ի՛նչ հսկայական հրապուրանքով ու բոլորին վարակող տրամադրությամբ եր ուրախանում Վլ. Իլյիչն ալատեղ, փողոցում՝ ժընեցիկների մեջ, վորոնց մեծ մասն, իհարկե, բանվորներ եյին ու առհասարակ այս ուրախ ու գեղեցիկ քաղաքի աշխատավորությունը: Ուժասպառվելու չափ պարելուց հետո մենք կաֆե (սրճարան) ներխուժեցինք, ծիծաղում եյինք, կատակում, հանգստանում, և մեր ուրախություններին, թվում եր, վերջ չկար:

Վերջապես, կարգին հոգնելուց հետո, ուղևորվեցինք մեր սիրած կաֆեն (Լանդոյտի), ուր շարունակ հավաքվում եր ռուս քաղաքական գաղութը, և ճաշակեցինք մեր սիրած կերակուրները՝ հրաշալի սոսիսկաներ թթու կաղամբով:


Մյուս որն սկսեցին խոսել մեր մասին, թե ինչպես բոլջևիկները Լենինի գլխավորությամբ ուրախանում եյին փողոցներում: Վոչոք, ըստ յերևույթին, չեր սպասում, վոր մենք այդպիսի համարձակությամբ կխախտենք եմիգրանտական բարեպաշտությունը և այդպիսի յերիտասարդական ու կենսուրախ մասնակցություն կունենանք ժողովրդական տոնին: Ինչքա՛ն զարմացան բոլորը, յերբ իմացան, վոր այդ գործի գորգապատճառը յեղել ե Վլադիմիր Իլյիչը:

# ՇԱԽՄԱՏԻ ՍԵՂԱՆԻ Ա Ռ Ջ Ե Վ

Աքսորավայրում Լենինն անսովոր հաճույքով ու մեծ սիրով եր նվիրվում ամեն տեսակ ֆիզիկական և մտավոր սպորտի:

Մեկ ել տեսար, որինակ, ամբողջ խմբով դուրս թափվեցինք դեպի գետի հաստ սառույցը՝ չմչկելու: Տաքացած ու կենսուրախ Իլյիչն արդեն առաջինն է այնտեղ ու յեռանդով ճչում է. «Հապա, տեսնեմ, ո՞վ ինձ հետ չափ կընկնի»: Յեղ ահա մի քանի գույզ վոտքեր աչխատում են առաջնության համար՝ «նվաճելով տարածությունը»: Իսկ բոլորից առաջ է Իլյիչը, վոր լարել է վողջ կամքը, մկանները՝ միայն թե հաղթի:

Մերոնցից վորսի սիրահարները հրացաններն ուսերին հավաքվում են գվարճանալու: Լավագույն վորսորդներն են — Կուրնատովսկին և Ստարկովը: Իսկ ինչ վերաբերում է Իլյիչին, նա մեծ վարպետ է «փուչ տալում» (վոսորդական տերմին, վոր նշանակում է անհաջող կրակել, վրքիպել): Իլյիչի համար սովորական բան էր թմբերի ու ճահիճների վրայով մի քանի կիլոմետր ճանապարհ անցնել, հուսալով, վոր կխփի այնպիսի հիմար մի թռչուն, վորը թույլ կտար բավականին մոտենալ իրեն:



Սակայն Իլյիչի բնավորությունն իբրև սպորտսմեհի՝ ամենից ավելի ցայտուն հանդես եր գալիս շախմատ խաղալիս:



Վրադիմիր Իլյիչը յերբեք չէր զայրանում կամ ինքն իրեն հանդիմանում իր շախմատային անհաջողությունների առթիվ:

Իմ ամենահաճելի հիշողութիւններէից մեկն ասի  
ժամանակն է, յերբ յես Կուրազինում իմ տխուր ու միա-  
կերպ կյանքը բովանդակալից եյի դարձնում Վլադիմիր  
Իլյիչից շարաթական յերկու անգամ նամակ ստանալու  
անհամբեր սպասումներով. նրա հետ յես գրազրուիթյամբ  
եյի շախմատ սկսել: Այդ նամակներն ամենից առաջ  
հաճելի եյին նրանով, վոր Վլադիմիր Իլյիչը, շախմատի  
սովորական խաղերի քայլերից բացի, միշտ գրում եր  
մի-յերկու ուրիշ եջ ևս, ուր պատմում եր, թե ի՛նչ աշ-  
խատութիւնն է գրում, թե հորիզոնում ի՛նչ ոպորտու-  
նիստական նոր աստղ է յերևացել և այլն, և այլն, (այս  
նամակները, վոր հավաքվել եյին յերկու-յերեք տաս-  
նյակի չափ, խուզարկութիւններէից մեկի ժամանակ,  
կարծեմ Պսկովում, ժանդարմները խլեցին ինձնից, և  
այդպէս ել կորան պահնորդական բաժնում): Սակայն  
այն ժամանակ ինձ համար հատուկ հետաքրքրութիւնն է-  
յին ներկայացնում նաև իմ շախմատային խաղակցի ըն-  
թացիկ պատասխանները: Իմ ամբողջ ազատ ժամանակը,  
վոր քավականին շատ եր, յես անց եյի կացնում նրո-  
նով, վոր շախմատի տախտակի վրա ստեղծեմ առաջիկա  
խաղերի կոմբինացիաների բոլոր հնարավոր տարբեր  
քայլերը և սրանցից ամենալավերն ընտրեմ: Բայց վո-  
րովհետև Վլ. Իլյիչը մեր այս շախմատային խաղերին  
կարողանում եր որովա ընթացքում միայն քոպեներ  
հատկացնել, և վոչ թե շատ ժամեր, ուստի և վերջիվեր-  
ջո նա տարվում եր, և յես մահկանացուներից ամենա-  
յերջանիկն եյի:

Ստարկովն ու Կրժիժանովսկին, վորոնց յես խաղի  
մեջ սխտեմատիկաբար տանում եյի (Պետերբուրգից  
Մոսկվա և Մոսկվայից Սիբիր ետապով ճանապարհոր-  
դելու ժամանակ), շատ լավ կարծիքի եյին իմ շախմա-  
տային արվեստի մասին: Յեվ յերբ յես Մինուսինսկում  
առաջին անգամ ծանոթացա Լենինի հետ, նրանք սկսե-

ցին ինձ ու Լենինին հրահրել՝ անմիջապէս շախմատ խա-  
ղալու: Մենք այլևս յերկար չկոտորովեցինք ու մեր ծա-  
նոթութիւնից հազիվ քառորդ ժամ անցած, նստեցինք  
իրար դեմ, խորասուզվելով խաղի մեջ:

Յես վորոչ հուզմունքով սկսեցի շարժել Ֆիզուր-  
ներն ու հետեակները: Շուտով խաղի արդյունքները  
պարզվեցին—յես փառավորապէս տարվեցի:

— Ի՞նչ կա վոր, յերբեմն պատահում է, վոր յես  
տանուլ եմ տալիս, մանավանդ՝ յերբ խաղում եմ նոր  
խաղակցի հետ, վորի խաղերի ձևերին դեռ չեմ վարժվել:  
Այ կտեսնենք, թե ի՛նչ ցույց կտա յերկրորդ խաղը:

Սակայն մյուս խաղն ինձ համար նույն չափ տխուր  
վախճան ունեցավ:

— Ո՛ր-ո՛, սատանան տանի, հարձակո՛ւմ, չուտով  
հարձակո՛ւմ...

Սակայն թե՛ յերրորդ, թե՛ չորրորդ խաղը նույն  
վախճանն ունեցավ, վոր մեծ հրճվանք պատճառեց իմ  
հին շախմատային հակառակորդներին՝ Ստարկովին ու  
Կրժիժանովսկուն:

Ուրիշ ճար չկար, վորքան ել անհաճելի լիներ ինք-  
նասիրութեան համար, այնուամենայնիվ պետք եր հաշտ-  
վել ուժերի փոխհավասարեցման մտքի հետ: Դրա հա-  
մար Իլյիչն իր խաղից հանում եր վորևէ թեթե ֆիզուր  
և դրանով հաղթութեան հույսերը հավասարակշռվում  
եյին: Ի միջի այլոց հիշում եմ, թե ինչպէս մենք յերե-  
քով՝ յես, Ստարկովն ու Կրժիժանովսկին սկսեցինք խա-  
ղալ Իլյիչի հետ: Մեր յեռյակ համաձայնութեան առաջ-  
նորդի դերն, իհարկե, պատկանում եր ինձ. այս կամ այն  
խաղի ընթացքն ընկերներիս պարզաբանելու պարտակա-  
նութիւնը կրկնապատկում եր իմ ուժերի և իմ ուշա-  
գրութեան լարումը: Յեվ—ո՛ր բախտավորութիւն, ո՛ր  
հրճվանք— Իլյիչը «չեղվել է», Իլյիչը պարտվում է. նա  
արդեն մի ֆիզուր կորցրեց, նրա գործերը վատ են: Մեր  
հաղթութիւնն ապահովված է:

Շախմատային «անտանտայի» ներկայացուցիչներին դեմքերը փայլում են խորամանկորեն: ու յայնանում՝ բաց ատամներով, ինչպես Պուշկինի կերպարանքը /ուտինի վրա, յերբ վերջինս ձգում ես լայնությամբ:

«Անտանտան» չարախնդաց ծիծաղում է իր հակառակորդին վրա և կատակով ու չաղակերատությամբ իր անկեղծ հրճվանքն արտահայտում՝ ճաշակելով սպիտակների հանճարեղ քայլի հետևանքների համը. քայլ, վոր սեւերի համար յեղավ ճակատագրական, բայց և չի նկատում, վոր կիսով չափ ջախջախված, բայց դեռևս չնահանջած թշնամին նստած է տախտակի մոտ՝ անչարժ վիճակում:

Իլյիչին՝ «սոկրատյան» բնորոշ ուռուցքներով լայն ճակատին քրտնքի կաթիլներ յերևացին, նա գլուխը կոացրել է շախմատի տախտակին և աչքերն անչարժ հառել այն անկյունին, վորտեղ կենտրոնացել է կովի գլխավոր ստրատեգիական կետը: Վոչ մի մկան չի դողում այս՝ կարծես վոսկորից կերտած դեմքին, վորի լայն քունքերին ձգվել են կապտավուն յերակները...

Թեթևամիտ «անտանտան» վոչինչ չի նկատում:

Առաջին անգամնգր տվեց «անտանտայի» առաջնորդը:

— Պա', պա', պա',—սա չենք նախատեսել... տաղնապալի ճայնով արձագանգում է նա Իլյիչի հոյակապ խաղը տեսնելով: Հրմ, հրմ... այն не дело треба разжуваты, \*)— մրմնջում է նա քթի տակին:

Բայց ափսոս, այժմ արդեն ուչ է. հարկավոր եր առաջուց վորոճալ. յերկու-երեք «խաղաղ» քայլով «անտանտայի» համառ հակառակորդն, իր խաղակիցների վաղաժամ ցնծության ու աղմուկի հանդեպ, այնպիսի դրություն ստեղծեց, վոր անսպասելի յեր դաշնակից-

ների համար, և պատերազմի «բախտը» դավաճանեց նրանց:

Այդ վայրկյանից սկսած դաշնակիցների դեմքերը հետզհետե ավելի ու ավելի յեն ձգվում, իսկ Իլյիչի աչքերը բոցավառվում խորամանկ կրակով: Դաշնակիցներն սկսում են հանդիմանել: Իրար, մեկը մյուսին կշտամբել «անկյալության» համար, մինչդեռ հաղթողը ժպտում է ուրախ ու զվարթ և թաշկինակով սրբում ճակտի քրտինքը:

\*) Այս գործը պանանջում եր մի քիչ վորոճալ:

# ԳՈՐՈՒԿԻ

Յերբ յես հանդիպում եյի ընկեր Լենինին, միշտ մնում եյի ապշած, թե ի՛նչպես նա, այդքան ծանրաբեռնված լինելով, կարողանում է ոգտովել կյանքի տարբեր հաճույքներին:

Նա շատ եր սիրում ծառեր, թռչուններ, առհասարակ՝ սիրում եր բնությունը: Վլադիմիր Իլյիչը տարվում եր վորսորդությամբ: Թե ինչքան լավ վորսորդ եր նա, — այդ չեմ կարող ասել. չեք պատահել, վոր յես վորսի գնամ. սակայն դատելով այն վորսով, վոր մեկմեկ բերում եյին մեր վորսորդները, պիտի ասեմ, վար այնքան ել հաջող չեր: Ճիշտ է, իհարկե, սրանում գուցե մեղավոր եր վոչ միայն վորսորդն, այլև վորսի բացակայությունը, սակայն սրանից չեր նվազում նրա սերը դեպի վորսորդությունը:

Պատեհ առիթներին Վլ. Իլյիչը տարվում եր խաղերով, որինակ գորդկի խաղով: Մեզ մոտ՝ Գորկայում ընդունված եր այս խաղը: Մառուղու յերկարությամբ, նահանգական աշխատավորների հանգստի տան մոտ, մենք հրապարակ շինեցինք՝ գորդկի խաղալու համար, և դեռ տնատիրոջ ժամանակից մնացած ծառուղու յերկարությամբ տնկած ծաղիկները «բարբարոսաբար» տրորում եյինք փայտերով: Մեկ անգամ սովորականից շատ մարդ հավաքվեց: Խաղացողներն այնքան տաքացան, վոր այլևս ուշադրություն չեյին դարձնում ծաղիկների վրա, վորոնց խղճուկ մնացորդներն անխնա վոչնչանում եյին: Փոշին կանգնել եր ամպի նման և աղմուկը, վեճերն ու գոռգոռոցը լցվել եյին չորս կողմը:

Հանկարծ բացվում է դարբասի փոքր դռնակը և յերևում են Վլ. Իլյիչը, Նադեժդա Կոնստանտինովնան ու Մարիա Իլյինիչնան:

11-24863 91


Լենինը միանգամից զբաղվում է ընդհանուր աղմուկով և հենց տեղնուտեղն անցնում գործի:

Հենց վոր Վլ. Իլյիչն սկսեց խաղալ, խաղը կանոնավորվեց, աղմուկն ու գոռգոռոցը մի քիչ պակասեցին: Կարծես թե բոլորը շփոթվեցին, գուցե և Վլ. Իլյիչի մասնակցությունը շոյեց նրանց ինքասիրությունը: Խոստովանում եմ, վոր սկզբում յես ել այնպես եյի տրամադրված, վոր անհարմար է տանել Վլ. Իլյիչին, սակայն նա սկզբից և յեթ այնպես տաքացավ ու սկսեց այնպիսի հարվածներ հասցնել, վոր բոլորին ել, ինչպես ասում են, ծալեց: Յեվ հենց այստեղ ել սկսեց կատակով ծաղրել բոլորին:

— Այ թե խաղացողներ եք, տեսեք, յես նոր միայն սկսեցի խաղալ ու արդեն տանում եմ բոլորիդ:


Ինտելիգենտներին Իլյիչը քիչ թե շատ զիջողաբար եր վերաբերվում, իսկ բանվորներին չեք խնայում:

— Ի՛նչ պրոլետարներ եք, ի՛նչ խաղացողներ եք, ա՛յ, այսպե՛ս խփեցեք, և հետևում եր ճարպիկ հարվածը:



ՎԼ. ԻԼՅԻՆԻ ինձ հանդիմանում եր այն բանում, վոր արտադրութիւնից դեռ նոր հեռացած, խալույն կորցրել եմ կառուցող բանվորի ճարպիկութիւնը:

Լենինի կատակներն ու սրախոսութիւններն այնքան էյին դրամել բոլորին, վոր շուտով սկսվեց մի այնպիսի աղմուկ ու աղաղակ, վոր սկզբում նկատելի չփոթութիւն հետքն իսկ չմնաց: Մենք բոլորս Լենինի հետ «դուք»-ով էյինք խոսում, սակայն, խաղի ընթացքում մեզ համար աննկատելի կերպով, սկսեցինք «դու»-ով



դիմել, «մասխարութիւն» էյինք անում, ծիծաղում, գոռոզում, խանգարում՝ յերբ նա խփում եր:

Նրա կատակներն ու ուրախութիւնները մրցման էյին դրդում մեզ. և մեր սկզբնական տրամադրութիւնը թե՛ «անհարմար ե տանել» — չքացավ: Չե՞ վոր մենք պրոլետարներ ենք և չպիտի վարկաբեկենք մեզ: Յերբ յես մեկ հարվածով տեղահան արի Փիգուրը, և առհասարակ սկսեցի ուղիղ խփել, նա ինձ ամենայն բարեխղճութեամբ տեղափոխեց առաջին կարգի խաղացողների շարքը: Այն ժամանակվանից համարյա ընկեր Լենինը մեր մշտական խաղակիցը դարձավ:

## ՎԼ. ԻԼՅԻՆԻ ՀԱՆԳԻՍԵԸ

Ինչպես ՎԼ. ԻԼՅԻՆԻ կարողանում եր զարմանալի տոկունութեամբ, լարվածութեամբ ու սխտեմատիկաբար աշխատել, այնպես ել լավ կարողանում եր նստատակահարմար ձևով ոգտագործել հանգստի համար սահմանած իր ժամանակը՝ ճշտութեամբ կատարելով բժիշկների առաջադրանքները, յեթե նրա հանդիսան ու բժշկութիւնը պուզադիպում էյին: Սակայն, դժբախտաբար, միշտ ծանրաբեռնված լինելով աշխատանքով և այն ել չափազանց պատասխանատու աշխատանքով, նա չափազանց քիչ եր հանգստանում և այն ել շատ հազվադէպ դեպքերում, վորով և քայքայվեց նրա առողջութիւնն ու նրա ուժերը և նա վաղաժամ գերեզման մտավ:

Կյանքումս մի քանի անգամ առիթ եմ ունեցել հանդիպելու ՎԼ. ԻԼՅԻՆԻ իր հանգստի ժամանակ, ուստի և ցանկանում եմ նկարագրել նրա կարճատե ժամանցն ինձ մոտ՝ Ֆինլանդիայի ամառանոցներից մեկում, հուլիսյան ապստամբութեան նախորդակին:

1917 թ. հունիսի վերջերին ՎԼ. ԻԼՅԻՆԻ իրեն չափազանց հոգնած եր զգում: Բաղաքական կյանքում դադար եր տիրել: Ընկերներն սկսեցին օտիպողաբար խնդրել իլյիչին՝ հանգստանալու:

Յես ևս մեկնեցի հանգստանալու՝ իմ ընտանիքով, Մուստամյակի կայարանի մոտ՝ Նեյվոյա դյուղում. ՎԼ. ԻԼՅԻՆԻ մի քանի անգամ ցանկացել եր գալ մեզ մոտ, ինչպես ասում են՝ թարմ ող շնչելու, բայց գործերը թույլ չէյին տվել:

Մեկնելիս յես նորից հիշեցրի նրան, Նադեժդա

կոնստանտինովնային և Մարիա Իլլինիչնային, վոր  
իրենց սենյակները պատրաստեն:

Յես հույս չունենի, թե Վլ. Իլլիչը կազատվի Պե-  
տրոգրազի շոգից, թեպետ և գիտեյի, վոր նա նորից  
կորցրել է քունը, գունատվել է, գլխացավեր ունի, աշ-  
քերից յերևում էր, վոր նա չատ է հոգնել:

Յեվ հանկարծ անսպասելիորեն հունիսի 27-ին, յե-  
րեկոյան ժամը հինգին, նայում եմ ու չեմ հավատում  
աչքերիս. հիշում եմ, վոր մի տեսակ կարծես թե կորցրի  
ինձ. ուղղակի դեպի պատշգամբն է ընթանում Դեմյան  
Բեդնին՝ իր լայն թիկունքով ծածկելով մյուսներին:  
Նրա յետեից—Վլ. Իլլիչն է բարձրանում՝ փոքրիկ պա-  
յուսակը ձեռքին. նրանց հետ է նաև Մարիա Իլլինիչնան:

Դեմյանը կատակով ու զվարճախոսությամբ, վարա-  
կող ծիծաղով և անքողարկելի ուրախությամբ հրճվե-  
լով՝ կանչում է.

— Մի տեսեք, ի՞նչ հյուր եմ բերել: Վո՛չ, Վերա  
Միխայլովնա, ի՞նչ ուզում էք ասեք, սակայն առանց  
դեղի չեմ հեռանա. առանց այն ել՝ փորս ցավում է. ուս-  
տի և այս բարեբախտության առիթով կաթիլներ շնոր-  
հեցեք:

— Այդ ի՞նչ կաթիլներ էք հնարել այստեղ մեռնող  
Դեմյանի համար, — ուրախ ու սիրալիր խոսեց Վլադի-  
միր Իլլիչը, բարևելով:

Պարզվեց, վոր Վլ. Իլլիչը հանկարծակի վորոչել է  
մեկնել հանգստանալու և Մուստամյակի կայարանից  
կոնսպիրատիվ սովորության համաձայն, մեկնել է վոչ  
թե ուղղակի հանգստանալու համար ընտրած վայրն,  
այլ կառքով գնացել է Դ. Բեդնու մոտ, այնտեղից ել,  
կառապանի հեռանալուց հետո՝ վտարով ինձ մոտ—մեկ  
և կես կիլոմետր: Մենք ծանոթ լինելով Վլ. Իլլիչի յեր-  
բեմն բոլորովին մենակ մնալու սովորությանն ու կարի-  
քին՝ ցույց տվինք նրան և Մ. Իլլինիչնային՝ նրանց հատ-

կացրած փոքրիկ սենյակները և անմիջապես ծանոթա-  
ցրինք որն անցկացնելու կարգին, սնվելու ժամերին և  
այլն, վորպեսզի դրանով նրան միանգամայն ազատ  
թողնենք իր անելիքների մեջ: Մենք մեր մեջ պայմանա-  
վորվեցինք ամեն կերպ հարմարվել նրա պահանջներին,  
բայց այնպես, վոր ինքը վոչինչ չնկատի, վորովհետև  
գիտեյինք նրա վերին աստիճանի բարեկրթությունը,  
նրա ճնշվողականությունն ու մշտական ձգտումն՝ ող-  
նելու բոլորին, մոռանալով իր մասին:

Հենց առաջին յերեկոյան, յերբ վրա հասավ Ֆին-  
լանդական չքնաղ նախագիշերային լուսթյունը, յերբ  
հազիվ շրջոց քամին աննկատելի որորեց իրիկնային  
մառախուղի նուրբ քուլաները, իսկ պայծառ արևմուտ-  
քը վոսկեղոծեց ու գունազարդեց հեռուները, կապուտով  
ներկեց դաշտերն ու հուրհրաց անձայր լիճը, յերբ հան-  
կարծ անվստահ, իսկ հետո ավելի և այլևի համարձակ,  
ավելի ձայնեղ սկսեցին ճովողել գիշերային թռչունները  
և, հանդարտ ճախրելով, համարյա անձայն ինչ վոր մո-  
տիկ տեղում պահվածքին չղջիկները, միանգամից դեն  
նետվելով բուռի սուր ճչոցից, և վերջապես, յերբ բոլոր  
խոնջացածներն սկսեցին նիրհել գիշերն աշխուժացույ  
ճպուռների և մարգագետնի այլ բնակիչների գեղգեզող  
ու սփոփող անդորր ճուռոցի տակ, — Վլադիմիր Իլլիչը  
վեր կացավ և կամացուկ առանձնացավ իր սենյակը:

Յես հրաժեշտ տվի Մարիա Իլլինիչնային: Ներ-  
քևում խոսում եյինք կիսաչուրկով, ման եյինք գալիս  
վոտների ծայրերին, կարծես վախենում եյինք խանգա-  
րել հունիսյան հրաշալի յերեկոյի լուսթյունը, վոր պա-  
րուրում էր Վլադիմիր Իլլիչի հանգիստը:

Առավոտյան պարզվեց, վոր Վլ. Իլլիչն իրոք այդ  
գիշեր ավելի յե քնել, քան վերջին որերին. իսկ յերբ  
խոր քնից կշտացել է, գիշերվա մյուս մասն անց է կաց-  
րել կիսարթուն վիճակում՝ առանց գլխացավի: Նա վեր  
կացավ առույգ տրամադրությամբ:

— Ի՞նչ լավ ող է, հիանալի՜ յե, — ասաց առավոտյան, պարտեզ մտնելով:

Դիտեց մեր փոքրիկ բանջարանոցն ու խսկույն հարցեր տեղաց. — Ի՞նչպիսի հո՞ղ է, շա՞տ աղբ է հարկավար, ի՞նչ է տալիս բանջարանոցը, բավարարո՞ւմ է մեր բնտանիքին, ի՞նչքան պետք է ջրե՛լ, շա՞տ ժամանակ է խլում քաղհանը:

— Ե՛հ, ի՞նչ եմ խոսում ձեզ հետ. — ուրախ ընդհատեց նա ինքն իրեն: Չեր գործերն, իհարկե, լավ կլինեն. ա՛յ, մենք դայակի հետ կխոսենք, — ու սկսեց հարցուփորձ անել մեր դայակին, վորը, ինչպես և մենք լուրրս, իր ազատ ժամերը բանջարանոցին եր նվիրում:

Որեցոր նրա ինքնազգացողությունը լավանում եր ու բունը կանոնավորվում:

Հաճախ, գլխավորապես Մարիա Իլլինիչնայի հետ, յերբեմն ել մեր ամբողջ խմբի հետ՝ գնում եր լճափ, ուր սիրում եր յերկար նստել:

Մի քանի անգամ հետը գնացել եմ լողանալու, և փորովհետև նա լավ լողորդ եր, յես անհարմար եյի գդում ինձ՝ նրան դիտելիս. լողում, անցնում եր հեռո՛ւ-հեռո՛ւ — հսկայական լճի ծոցն ու այնտեղ պառկում, ճոճ վում ալիքների վրա... Յես գիտեյի և զգուշացնում եյի, վոր լիճն ունի ցուրտ հոտանքներ, վոր հրաբխային է ու շատ խոր, վոր կան ջրապտույտներ, անդունդներ, վոր վերջապես շատերն են խեղդվում, և պետք է զգույշ լինել ու հեռու չլողալ:

Ո՞ւմ ես ասում...

Ասում ես՝ խեղդվո՞ւմ են, — մեկ-մեկ հարցնում եր Վլադիմիր Իլլիչը՝ դարսելով հանած զգեստները.

Այո՛, խեղդվում են, — ա՛յ, վազուց չեր, վոր...

— Վոչի՛նչ, մենք չենք խեղդվի... Յուրտ հոսանքները հաճելի չեն... Բայց վոչի՛նչ, արևը կտաքացնի... Ասում եք՝ խո՞ր ե...

— Են ել ի՞նչպես խոր...

— Պետք է փորձել, հասնել հատակին...

Յե՛վ դեռ խոսքը բերանիդ, տեսնում ես նա՛ վազում յճափի թեք հունով, ապա ցուրում դելֆինի նման, ձեռներն առաջ տանում, ջուրը գցում իրեն — ու կորավ:

Մեկ ել անսպասելի յերևում է հեռվում, շուտ գալիս մեջքին, նստում ջրում մինչև մեջքը, ձեռքերով հավաքում մազերը, սրբում յերեսը, և՛ կանչում, և՛ գոռում, և՛ գոհ է, և՛ ուրախ:

— Ի՞նչ յերկար մնացիք այդտեղ, — այստեղ հրաշալի յե...

Խաղում է ջրի հետ, չարժվում է, սուզվում, կարծես ամբողջ կյանքը ջրում է անցկացրել: Հանկարծ նորից անհայտացավ: Վերջապես լողում է, հազիվ նշմարվում է գլուխը, ահա շուտ յեկավ մեջքին, հանգստանում է, ապա նորից շուտ յեկավ ու ձգեց թևերը, և ի՛նչպես. հսկայական, ուժեղ հարվածներով — թռչում է նավի պես:

Հատակին չհասա, ա՛յ թե խոր ե... Հրաշ-շալի յե, գոչում է ու նորից ծածկվում:

Թվում է, թե վորոշել է ջրից դուրս գալ. արագ շրջվում է մեջքին և ավելի արագ սուրում. ձեռքերը մեջքի մոտ պտտվում են, ինչպես շոգենավի թիակներ: Բայց չի ուզում զրկվել այդ բավականություններից — մեկ ել է սուզվում, գլխիոնձի տալիս, դուրս ցատկում...

Յե՞րբ են, վերջապես, ալիքները նրան դուրս բերելու ափ:

Վերջապե՛ս...

Չափազանց գոհ է. գո՞վում է լիճը. գո՞վում տարբեր բարեխառնությունը... Ասում է, թե ինչպես ընկավ ցրտի մեջ, վորը կարծես կտրում եր, իսկ հետո՞՛ արևի տակ: Սուզվել եր շատ խորը. վոչ խոտ, վոչ հատակ, վոչ չինչ չի յերևացել, մութն է ջրի տակ...

Մաղրում է ջրից վախեցողներին, ասում է, վոր

վաղը նորից ե լողանալու... Տեսնում եմ, վոր գործը լուրջ բնույթ ե ստանում: Կանչել լավ լողորդներին՝ նրա հետ միասին լողալու—չի լինի, կբարկանա, չի գնա լողալու, կգրկվի բավականությունից, իսկ այսպես—ահը բռնում ե ինձ... Ախր լիճն իսկապես վտանգավոր ե:

Լճի շուրջն ապրող Փին ձկնորսներն անգամ սիրտ չեն անում ափից հեռու լողալու: Ի՞նչ անել:

Վորոչեցի Վ. Իլյիչից ծածուկ հարմարեցնել մի մակույկ, վորը յես լավ եմ զեկավարում: Գնում եմ մակույկ վարձելու և տեղափոխելու այնտեղ, ուր մոտ ե լողալու տեղերին:

Ինձ կանգնեցնում են, հարցնում:

— Ո՞վ եր յերեկ ձեզ հետ լողում... Ա՛յ թե լողորդ եր հա՛...

— Բալթիկ ծովի նավաստի յե, իմ ազգականն ե,— ստում եմ յես, առանց քաջվելու, վորպեսզի չմատնեմ Վ. Իլյիչին:— Տեսավ ջուրը, չհամբերեց, բաղի պես սուզվեց...

— Յերևում ե, վոր նավաստի յե... Այ թե լողում ե, հա՛...

## ՎՈՐՍԻ

Այս դեպքը պատահեց դրոշակներով աղվես վորսալու ժամանակ: Հետագայում Վ. Իլյիչը հենց այս վորսի մասին եր գրել իր հողվածներից մեկում, վոր տպված եր «Պրավդայում» և ուզոված... մենչեիկների գեմ: Այս վորսով շատ եր տարվում Վ. Իլյիչը. սրա եյու-թյունը կայանում եր նրանում, վոր «աղվեսին հատկապես ողակում են» կարմիր դրոշակներով՝ բավական մեծ տարածության վրա ու թողնում միայն մի յելք, վորտեղ կանգնած ե վորսորդը և ուր քշում են աղվեսին ծափ տալով ու աղմուկ բարձրացնելով: Իսկապես կարելի յե տարվել այս վորսով, վոր շատ գեղեցիկ ե, սակայն դժվար, վորովհետև վորսորդից մեծ համբերություն ե պահանջում, իսկ նրա ոգնականից՝ մեծ հմտություն:

Այս վորսի ժամանակ մենք յերեքով եյինք—Վ. Իլյիչը, Իվան Պավլովիչ Փուկովը և յես: Յես մոտ եյի կանգնած Վ. Իլյիչին և տեսա, թե ինչպես նրա վրա յե գալիս սուր զնչով կասկածամտորեն հոտոտելով՝ բաց դեղին գեղեցիկուհին՝ աղվեսը: Չյունապատ յեղեմինները Վ. Իլյիչին ծածկում եյին աղվեսի հայացքից: Աղվեսն առաջ ե գալիս ուղիղ դեպի Վ. Իլյիչը, իսկ նա՝ փոխանակ հարմար միջոցն ոգտադործելու և արագ ու շեշտակի հրակելու, սառած կանգնել ու նայում ե՝ առանց կրակելու: Աղվեսը կանգ առավ, գլուխը դարձնելով դեպի նա: Այդ ժամանակ Վ. Իլյիչն սկսեց հրացանը կամացուկ բարձրացնել, սակայն, իհարկե, այդքանն արդեն բավական եր, վոր աղվեսը կայծակի արագությամբ շուռ գար, թափահարեր պոչն ու անհայտանար:

Իմ հարցին, թե ինչո՞ւ չէր կրակում, Վ. Իլյիչն ասաց.

— Նա այնքա՛ն գեղեցիկ էր, այնքա՛ն լավ...

Յեվ իրեն հատուկ բարեսրտությամբ ու մեղմ ժպիտով սկսեց զժգոհել իրենից, ասելով, վոր ինքը «վոչ թե վորսորդ ե, քյլ... փինաչի» և այլն:

Յես հասկացա, վոր նա, իհարկե, դիտմամբ չկրակեց:

Շատերն են նչել Վ. Իլյիչի բնավորության այս գիծը—վորսորդներին հատուկ սպեցիֆիկ անտարբերության բացակայությունը, յերբ նրանք մոռանում են, վոր իրենց դեմ կենդանի եյակ ե կանգնած... Մեկ անգամ, յերբ նա Յե. Պրեոբրաժենսկու հետ փայտմորիկներ էր վորսում, նա ելի չկրակեց և այնքան չափսոսաց, յերբ փայտմորիկն աղմուկով թռավ: Վ. Իլյիչը բավականացավ միայն նրանով, վոր ինքը լսեց բացվող արչալույսի կիսամութին հին յեղևներների կանաչ ճյուղերի մեջ յերգող թռչնին, տեսավ, դիտեց նրա վեհ գեղեցկությունը...

Շատ են պատմել ու գրել Լենինի արտասովոր պարզ վերաբերմունքի մասին՝ դեպի ուրիշները:

Հիշում եմ, մեկ անգամ փոշոտ ճանապարհով յես ու նա վորսի եյինք գնում գեղջկական սայլի մեջ որորվելով: Քիչ չէր—պիտի 40 կիլոմետր կտրելինք: Վ. Իլյիչը,—կապույտ բլուզը հագին, գոտկած, մոխրագույն գզակով,—կորացած, նստել էր սայլապանի կողքին ու դեսից—դենից զրուցում էր նրա հետ՝ պարզ, չհարկազրված: Մյուս սայլով հետևից գնում եյինք յես, նույն ժուկովը և մի ուրիշ գեղջուկ սայլապան:

— Ո՞վ ե են առջևից գնացողը. խո Լենինը չի՞,— հարցրեց մեր սայլապանը:

— Չե՛, —պատասխանեցի յես.

— Չե՛ չե՛,—ինչ անենք:

Սակայն նրա համոզված պատասխանի տոնից յերեվում էր, վոր նա բոլորովին չհավատաց իմ ասածին:

Իհարկե, չհավատաց, վորովհետև այն ժամանակ անկարելի յեր չճանաչել Վ. Իլյիչին, քանի վոր ամեն մի խրճիթում կար նրա նկարը: Հենց այն փաստը, վոր համաշխարհային հեղափոխության առաջնորդն, ինքը Լենինը, ժողկոմխորհի նախագահը, համաշխարհային բուրժուազիայի սարսափն ու «գիկտատուրան», ինչպես նրան պատկերացնում էր բուրժուական մամուլը,—սայլապանի կողքին որորվում ե հասարակ գեղջկական սայլում, ըստ յերևույթին նրա համար բոլորովին ել տարորինակ ու անհասկանալի բան չէր:

Վլադիմիր Իլյիչի պարզ և հասարակ լինելու այս հատկությունը և վերաբերմունքի մեջ արտակարգ կերպով պահանջկոտ լինելը յերևան եյին գալիս միշտ և բոլոր դեպքերում:

Նույն վորսի ընթացքում մենք ստիպված եյինք յերկու որով գիշերել մի խրճիթում, խոտնոցում: Վ. Իլյիչը յերբեք թույլ չէր տալիս, վոր ուրիշները հողան իր կարիքները, ամեն ինչ ինքն էր անում, դեմ էր իրեն ուրիշներից տարբերելուն և այլն: Սակայն ինքը չափսոցանց ուշադիր էր ու հողատար դեպի վորսի ընկերները և կարծես թե պարտք էր համարում վորսի պայուսակի մեջ յեղածը նրանց հետ բաժանելու: Իրեն թույլ չէր տալիս գանգատվել հոգնածությունից, թեպետ յերբեմն տուժում էր ու անհանգստանում:

Հիշում եմ, թե ինչպես մեկ անգամ յես պիտի վազ առավոտյան արթնացնեյի նրան, վոր անտառ գնայինք: Վ. Իլյիչը վեր կացավ, բայց նկատելի յեր, վոր հողանած ե ու բեզարած: Հարցրի՞ ի՞նչ ե պատճառը: Նա գանգատվեց, վոր չի քնել, վոր նրան տանջում ե սարսափելի գլխացավը: Բայց և այնպես, յերբ յես ասացի,

վոր կարելի յե այդքան վաղ չգնալ, նա կտրուկ կերպով բողոքեց, ասելով, վոր չի կարող խոսք լինել չգնալու մասին, վոր չլինի թե իր պատճառով խանգարվի ճահիճ գնալը:

Գեղջուկ տղերանց հետ նա միշտ շուտ եր մտերմանում, և այս դեպքում նրա կատակներն էլ վերջ չունեցին:

Արևը մայր մտնելուց հետո, կոցարները վորսին, յես լսեցի մորի հավի ծանոթ ձայնը, բավական մոտ՝ յերկու հարյուր քայլի վրա: Իմ մեջ մի միտք ծագեց, վորի մասին իսկույն հայտնեցի Վլ. Իլյիչին:

— Լավ չի՞ լինիլ, — ասացի յես, — այժմեթ վրաններ սարքենք, վորպեսզի առավոտյան ուղղակի սկսենք մեր վորսը:

Վլ. Իլյիչն անմիջապես համաձայնվեց:

Ճշտությամբ վորոչելով տեղը, վորտեղից մորի հավի ձայներ լսեցինք, մենք յերկուսով տաք-տաք կպանք գործի: Վո՛չ յես, վոչ Վլ. Իլյիչը նույնիսկ մի գրչահատ չունեցինք: Փչերն ու ճյուղերը ձեռքերով էյինք կոտրատում և առանց վորևե գործիքի՝ միացնում: Բայց և այնպես մեկ և կես ժամ չանցած, յերկու վրանն էլ պատրաստ եր:

Յես դեռևս այն ժամանակ ապշեցի, յերբ տեսա, թե ի՞նչ հաիչտակությամբ ե աշխատում Վլ. Իլյիչը: Վրանը վաղվա վորսի համար լավագույն կերպով հարմարացնելով, նա քարչ եր տալիս ու կտրատում ճյուղերը, ձողերը յեռանդով խփում եր գետնի մեջ՝ վրայից փռելով մանր ճյուղեր:

Մենք գյուղ վերադարձանք հոգնած և իսկույն փովեցինք խոտնոցում: Լուսինը պայծառ լուսավորում եր, հեռվից թռչունների ձայնն եր լսվում:

Գիշերվա ժամը յերեքն եր: Վեր թռչելով, գարթեց-

րի Վլ. Իլյիչին, և մենք յերկուսով վազեցինք դեպի մեր վրանները: Բարեբախտաբար թռչունները դեռ չէյին յեկել — ուրեմն չէյինք ուշացել: Մտնելով վրանը, մենք տապ կացանք:

— Յը՛ռոռ, Փը՛ռոռ... — յավեց թևերի թափահարություն, և իմ վրանի մոտ իջավ մի թռչուն: Նրա պոչի սպիտակ փետուրները հովհարի նման շարժվում էյին իմ աչքերի առջև: Վրանի փոքրիկ անցքից յերևում եր նա՝ փոված թևերով ու խոնարհած գլխով:

Մի քանի րոպե անց՝ իջավ յերկրորդը: Չայնը շատ մոտ եր: Յես չսպասեցի և նշան բռնելով՝ կրակեցի: Կրակոցից մյուս թռչունը թռավ, — իսկ առաջինը մնաց գետնին փոված:


Յերբ յես դուրս յեկա վրանից, շատ ափսոսացի, վոր թռչունները նստեցին իմ, և վոչ Վլ. Իլյիչի վրանի դիմաց: Յերևում եր վոր նա էլ եր ափսոսում:

Սակայն այս դեպքում էլ նա իր զգացումներն արտահայտեց հումորով ու իրեն հատուկ ծիծաղով, և վոչ դժկամությամբ, միաժամանակ նշելով, վոր ինքն ե մեղավոր, վորովհետև պետք ե ինքն էլ մեկ յերկու անգամ կանչեր թռչունների ձայնով, այն ժամանակ նրանք իր վրանի մոտ կնստեցին:

Վլ. Իլյիչի հետ մասնակցել եմ նաև գայլերի վորսին: Դժբախտաբար Վլ. Իլյիչի նվիրական բաղձանքը — գայլ սպանելն — անկատար մնաց:

Նա իրեն բարոյապես պարտավորված եր զգում գոնե մեկ գայլ սպանելու, քանի վոր գայլերի վոչնչացման հարցը չափազանց կարևոր եր, և նույնիսկ քիչ եր մնում ժողկոմխորհին զբաղեցնել:

Վերջին վորսը, վորին յես չեմ մասնակցել, նույնպես անհաջող եր: Վերադարձին ավտոն խրվել եր ձյան մեջ, և Վլ. Իլյիչն ստիպված ե յեղել համարյա ամբողջ



գիշերն անտառում անցկացնել՝ մինչև ավտոն կարգի բերելը:

Ի միջի այլոց, նման րոպեներին անգամ նա յերբեք անհամբերութիւն չեր ցուցարբերում ե վոչ ել նույնիսկ դժգոհութեան նշույլ:

Հիշում եմ, ինչպես մեկ անգամ ուշ գիշերով մեզ վիճակվեց մտանալ Չարսիտայե գյուղին, ուր դնացել յինք՝ բազեր վորսարու: Մեզ մնում էր յերեք կիլոմետր՝ մինչև Չարսիտայե: Չորսով եյինք. յես վորոշել էյի մեր խումբն անցկացնել կարճ ճանապարհով, բայց վերջը մոլորվեցինք: Գիշեր Ժամանակ, դաշտում, ցուրտ քամուն, ջրալի կավի մեջ խրվելով, վոր հասա շերտերով կպչում էր մեր կոշիկներին, մենք համարյա ուժասպաս յեղանք: Ձիերն ուղարկել եյինք առաջ: Բաց դաշտում մեկին հանգիպելու կամ վորևե մեկից ողնութիւն սպասելու հույս չունեյինք:

Վ. Իլյիչն առաջարկեց վերադառնալ առաջին գյուղը: Մենք վերադարձանք: Յես ինձ հանդիմանում էյի, վոր չկարողացա ճշտութեամբ վորոշել ճանապարհը, մյուսները դժգոհում եյին, վոր իզուր տեղը մեկուկես կիլոմետր դժվարին ճանապարհ անցանք:

Միայն մեկուկես ժամից հասանք գյուղ: Ամբողջ ժամանակը յես չլսեցի Վ. Իլյիչից վոչ մի դժգոհութիւն, վոչ մի հանդիմանական բառ: Նա տեսավ, վոր յես արի



այն ինչ կարող եյի, և վոր դաշտում, մթության մեջ  
ճիշտ ճանապարհ գտնելն իսկապես դժվար եր:

Կարելի չե ուղղակի ասել, վոր Վլադիմիր Իլյիչը  
վատ չեր կրակում, թեպետ ինքն իր մասին ասում եր,  
վոր վորսորդ չի և կանոնավոր կրակել չգիտի: Նա շատ  
եր սիրում հատկապես կտցարներ վորսալ: Այստեղ կու-  
րեորն, իհարկե, այն գեղեցիկ պայմաններն են, վո-  
րոնց մեջ տեղի յեր ունենում վորսը: Ըստ յերևույթին,  
նրան մեծագույն հաճույք եր պատճառում թռչունի թռիչ-  
քը դիտելը, և նա միշտ հիացմունքով եր պատմում իր  
դիտածը, — ինչպես անցավ թռչունն, ինչպես նազանքով  
թեքեց գլուխը և ինչպես իրիկնային մշուշում գծագր-  
վում եր նրա յերկար կտուցը:

Միակ բանը, վոր նրան վիշտ եր պատճառում, այդ  
այն եր, վոր նա յերբեք չեր կարողանում պարզորոշ  
կերպով լսել կտցարների շուն բնորոշող թռչունների  
խոսույր:

Յե՛վ յերբ նրան ասում եյինք. — Լսո՞ւմ եք, խոսում  
ե, թռչում ե... նա միշտ ձգվում եր, ահանջ դնում ու  
ապա թափահարում ձեռքը և անկեղծորեն վշտացած  
ասում.

— Վո՛չ, չեմ լսում, վորի՛նչ չեմ լսում:



ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.

193

11

27863

КАК

ОТДЫХАЛ

Л Е Н И Н

ГИЗ ССР АРМЕНИИ ЭРИВАНЬ